ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԱԲԱՆ

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատվեցին Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր):

Ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների հաշվետվությունը հրապարակվել է Ռազմավարության և Գործողությունների մշտադիտարկման նպատակով ստեղծված կայքէջում (https://datairav.am/): Գործողությունների ծրագրով 2024 թվականի ընթացքում կատարման ենթակա են եղել սահմանված 12-ից 4 նպատակների 14 գործողություններ, որոնցից կատարվել են 4-ը, չեն կատարվել՝ 7-ը, և մասամբ են կատարվել՝ 3-ը:

2024 թվականի ընթացքում կատարման ենթակա գործողությունների 28 արդյունքային ցուցանիշներից փաստացի կատարվել են 14-ը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ 3

ՆՊԱՏԱԿ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ 6

ՆՊԱՏԱԿ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 7

ՆՊԱՏԱԿ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 8

ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 10

ՆՊԱՏԱԿ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 11

ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ 12

ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Նպատակ 1-ի շրջանակներում 2024 թվականի փետրվարի 1-ից գործարկվեց «Էլեկտրոնային դատարան» համակարգի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը (cabinet.armlex.am): Համակարգը թույլ է տալիս քաղաքացիական դատավարությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ հայցի հարուցումից մինչև եզրափակիչ դատական ակտի հրապարակում և կատարողական թերթի տրամադրում: Համակարգի ներդնումից և գործարկումից հետո 2024 թվականի ընթացքում էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է շուրջ 15.000 էլեկտրոնային գործ և կայացվել է շուրջ 5.000 դատական ակտ:

2024 թվականի ընթացքում «Էլեկտրոնային դատարան» համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկելու ուղղությամբ մեկնարկել է պայմանագրի 3-րդ փուլի աշխատանքները, որը իր մեջ ներառում է շահառուների վերապատրաստումները, ինչպես նաև համակարգի պիլոտային գործարկումը:

«Էլեկտրոնային դատարան» համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլի մշակման ուղղությամբ այս պահին մշակվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծը: Հարկ է նկատի ունենալ, որ քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ: Հաշվի առնելով այն, որ արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:

Ինչ վերաբերում է հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի ներդրմանը, ապա որակյալ և դինամիկ

վիճակագրություն ապահովելը համակարգային հիմնախնդիր է, և անհրաժեշտ է այն հասցեագրել առաջին հերթին դատական գործերի մակագրության և բաշխման ժամանակակից համակարգ ունենալու համատեքստում: Հարկ է նշել, որ դատարաններից պատշաճ և ամբողջական ինքնաշխատ վիճակագրություն ստանալու հիմնական խնդիրը, թերևս, էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի բացակայությունն է, որտեղ պետք է ներդրվեր միասնական գործիքակազմ՝ տարբեր համակարգերից մեկ տեղում տվյալներ արտացոլելով:

Ընդ որում, միասնական հարթակի ներդրման առնչությամբ մշտադիտարկումը արդյունքներով կրկին իրականացվում է կարիքների գնահատում, համակարգերի ուսումնասիրություն, արդյունքում՝ միասնական համակարգի կոնցեպտի մշակում:

2024 թվականի ընթացքում ներդրվել և գործարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգը (https://cabinet.harkadir.am/), որի շնորհիվ, կատարելագործվել և ընդլայնվել են կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմերը, կրճատվել է այլ գերատեսչությունների հետ փաստաթղթաշրջանառության ժամանակահատվածը: Համակարգի գործարկումը ապահովել է կատարողական վարույթի կողմերի համար կատարողական վարույթին առնչվող տեղեկատվության և փաստաթղթերի հասանելիությունը և ընդլայնել էլեկտրոնային եղանակով կատարվող կատարողական գործողությունների շրջանակը: 2024 թվականի ընթացքում կատարման ենթակա գործողություններից է նաև e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացումը: Այս ուղղությամբ, կատարվել է բիզնես գործընթացների վերլուծություն, որը ցույց է տվել, որ առկա համակարգի արդիականացումը արդյունավետ չէ, և անհրաժեշտ կլինի ներդնել նոր համակարգ: Ամբողջական թվայնացման կոնցեպտը արդեն հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից և վերջնականացվել է տեխնիկական առաջադրանքը :Համանմանությամբ ընդլայնվել է նաև իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգը արդիականացնելու շրջանակը `

հիմքում ունենալով բիզնես սկսելու և վարելու կյանքի փորձառությունը՝ նախատեսելով հնարավորինս թվայնացնել դրան առնչվող բոլոր գործառույթները:

Նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով պայմանագրերի վավերացման և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի մասով էլ պետք է նշել, որ որդեգրվել է առավել համակարգային լուծում՝ նոտարական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացումը: Համապատասխան տեխնիկական առաջադրանքը արդեն վերջնական լրամշակումների փուլում է:

ՆՊԱՏԱԿ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ

2024 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ««Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որը ուժի մեջ է մտել 2025 թվականի հունվարի 9-ին: Փոփոխությունների ընդունմամբ առաջին անգամ նախատեսվել են փաստահավաք գործառույթներ իրականացնող մարմնի՝ Փաստահավաք հանձնաժողովի ձևավորման կարգը, նպատակները, իրավասությունները, գործունեության կարգը և փաստահավաք գործունեության իրականացման համար անհրաժեշտ այլ կարգավորումները:

Այս հանձնաժողովի գործունեությունն արդյունքում Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2023 թվականը, ներառյալ ժամանակահատվածում որոշակի ոլորտներում մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների բացահայտման ուղղությամբ կիրականացվի փաստահավաք գործունեություն և դրանց վերաբերյալ կկազմվի փաստահավաք զեկույց:

ՆՊԱՏԱԿ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2024 թվականի դեկտեմբերի 5-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթը: Փաթեթով համապարփակ կերպով կարգավորվել են ընտրությունների առնչությամբ տարիների ընթացքում բացահայտված և վեր հանված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, սահմանվել են կարգավորումներ, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող, տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընտրական իրավունքի առավել արդյունավետ իրացմանը: Իր հերթին, հստակեցվել են քարոզչական պաստառների և այլ նյութերի, ինչպես նաև քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ կարգավորումները: Նախատեսվել են նաև նախընտրական հիմնադրամների արդյունավետ կառավարման և ֆինանսական վերահսկողության կառուցակարգեր և ընտրական համակարգի ու ընտրությունների կազմակերպման արդյունավետության հետ կապված այլ դրույթներ:

ՆՊԱՏԱԿ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման շրջանակներում 2024 թվականի ընթացքում կատարման ենթակա գործողություններից է եղել հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցներով ապահովելը:

Այս գործողությունը ամբողջությամբ կատարվել է, և Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից ի վեր՝ հիշյալ դատարանը գործել է Երևան Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում գտնվող վարչական շենքում, որի շենքային պայմանների և տարածքի բարեկարգման նպատակով՝ 2022-2024թթ. իրականացված շինարարական և նյութատեխնիկական ապահովման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2024թ. դեկտեմբեր ամսին: Ինչ վերաբերում է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին, ապա 2024թ. 2-րդ կիսամյակի ընթացքում՝ շինարարական աշխատանքների ավարտից հետո, դատարանը տեղակայվել է Երևան քաղաքի Արա Սարգսյան 5/1 հասցեում:

Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման շրջանակներում բացի Գործողությունների ծրագրով կատարման ենթակա գործողություններից, իրականացվել են նաև մի շարք այլ բարեփոխումներ:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ակնհայտ անհիմն հայցի ներկայացումը սահմանվել է որպես հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք և նման դեպքերում բացառվում է վճարված տուրքի վերադարձը: Այսինքն՝ ստեղծվել է զսպող մեխանիզմ նման հայցերի համար, երբ հստակ է, որ անձը գիտակցում է իր պահանջի իրավաչափ չլինելը, բայց դիմում է

դատարան: Բացի այդ, եթե գործի քննության արդյունքում է պարզ դառնում, որ հայցն անհիմն է, այն կարող է քննվել արագացված կարգով և մերժվել՝ ապահովելով այդ գործերի արագ և քիչ ռեսուրսատար քննությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում նախատեսվել է նաև, որ քաղաքացիական գործերով դատավորի փոփոխության դեպքում նոր դատավորը հնարավորություն կունենա շարունակել գործի քննությունը ընդհատման պահից: Այլևս բոլոր դեպքերում պարտադիր չի լինի գործի քննությունը սկզբից սկսելը, և արդյունքում չեն լինի գործի քննության անհարկի ձգձգումներ:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների արդյունքում նախատեսվել է հնարավորություն դատական տուգանք կիրառել դատական նիստից դուրս, սահմանափակել միտումնավոր դատավարական չարաշահումները, որոնք միտված են գործի տապալմանը: Արդյունքում, դատարանը գործուն միջոց կունենա պայքարելու դատական ձգձգումների դեմ:

ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Քրեահիրավական ոլորտի բարեփոխումների շրջանակներում 2024 թվականի ընթացքում վերապատրաստում են անցել 502 քրեակատարողական ծառայողներ, որոնցից 477-ը ստացել են վկայական: Պրոբացիայի ծառայության թվով 53 ծառայող վերապատրաստում է անցել «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Բարեվարքություն» թեմայով:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակմանը, ապա պետք է նշել, որ ներկայումս իրականացվում են էլեկտրոնային դատարանի քրեական մոդուլի ներդրման կապակցությամբ աշխատանքներ, որի շրջանակներում և դրան զուգահեռ ապահովվելու է նաև դատական վարույթի մասով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի ամբողջական հարմոնիզացիան թվայնացման տրամաբանությանը՝ ըստ անհրաժեշտության խմբագրելով նաև մինչդատական վարույթի մասով առկա կարգավորումները:

ՆՊԱՏԱԿ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը 2024 թվականին արդեն գրանցել է իր առաջին հաջողությունները արբիտրաժային գործերի քննության և հաշտարարության ոլորտներում՝ ապահովելով ինչպես միջազգային, այնպես էլ տեղական արբիտրաժային և հաշտարարության գործերի վարումը: 2024 թվականի վերջի դրությամբ՝ Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը շուրջ 2000 պայմանագրում արդեն նշվել է որպես վեճը լուծող մարմին:

Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ 2024 թվականի ընթացքում Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը վարել է շուրջ 2 միջազգային արբիտրաժային և 1 միջազգային հաշտարարության գործ, ինչպես նաև 10 ներպետական արբիտրաժային և 4 ներպետական հաշտարարության գործեր:

Հաշտարարության ոլորտում բարեփոխումները նույնպես շարունակվել են, և կազմակերպվել են հաշտարարների որակավորման նպատակով հավակնորդների ուսուցման 4 և վերապատրաստման 1 դասընթացներ, ինչպես նաև կազմակերպվել է 3 որակավորման ստուգում, որոնց շնորհիվ հաշտարարների համայնքը համալրվել է 124 հաշտարարներով: Հատկանշական է, որ հաշտարարների ուսուցման նպատակով դասընթացներից երկուսը կազմակերպվել են մարզերում գործող հաշտարարների ներգրավման նպատակով:

ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հարկադիր կատարման բարեփոխումների կապակցությամբ 25 տարի առաջ ընդունված ԴԱՀԿ օրենքի փոխարեն ընդունվել է«Կատարողական վարույթի մասին» նոր օրենքը և դրանից բխող երեսունից ավելի հարակից օրենքների փաթեթը: Այս փաթեթի ընդունմամբ սահմանվել են առանձին խումբ կատարողական վարույթների իրականացման առանձնահատկությունները, հստակեցվել են կատարողական վարույթի կասեցման, կարճման, ավարտի հիմքերը և դրանց իրավական հետևանքները, վերանայվել է կատարողական ծախսերի հաշվարկման համակարգը՝ ապահովելով կոնկրետ կատարողական վարույթի շրջանակում իրականացված գործողությունների և գանձվող վճարների միջև կապը, ներդրվել է ոչ դրամական պահանջների կատարման նոր միջոցներ, նախատեսվել են առանձին տեսակի գույքերի բռնագանձման առանձնահատկությունները, ինչպես նաև ներդրվել են էլեկտրոնային կատարողական վարույթի և էլեկտրոնային ծանուցումների իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքեր:

Բացի այդ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամբողջ անձնակազմը մասնակցել է ծառայության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, որոնք վերաբերել են հարկադիր կատարման ոլորտում նոր գործիքակազմերի կիրառության առանձնահատկություններին ու տեխնիկական հնարավորություններին:

Հարկ է նշել, որ 2024 թվականին Ռազմավարության և Ծրագրի կատարման մշտադիտարկման խորհրդի նիստ տեղի չի ունեցել: